05 նոյեմբերի 2019 թվական

Արձանագրություն N 9

ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի՝ էլեկտրոնային եղանակով անցկացված արտահերթ նիստի

Նախագահ՝ Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան

Մինչև 05.11.2019թ. քվեարկել են խորհրդի 10 անդամներից 8-ը:

Չի քվեարկել՝ Ավագ Ավանեսյանը և Մելիտա Հակոբյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Հավանության տալ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող ոչ պարենային ապրանքների և օրենսդրական չափագիտական վերահսկողության ոլորտի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 1263-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծին:

2019թ. նոյեբերի 1-ին խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին է ուղարկվել շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող ոչ պարենային ապրանքների և օրենսդրական չափագիտական վերահսկողության ոլորտի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 1263-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծին՝ դրանց կողմ կամ դեմ լինելու վերաբերյալ քվեարկություն կատարելու նպատակով: Մինչև 05.11.2019թ. շուկայի վերահսկողության տեսչական մարմնի էլեկտրոնային հասցեին ստացվել են խորհրդի 10 անդամներից 8-ի կողմից ուղարկված «կողմ եմ» բառերը: ՀՀ կառավարության 2019թ. օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետի համաձայն հեռակա քվեարկությունը համարվում է կայացած:

Խորհուրդը որոշեց հավանություն տալ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակին և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերին ՝ 8 կողմ ձայներով:

Խորհրդի նախագահ՝ _____ **Տիգրան Խաչատրյան**

Քարտուղար՝ _____ **Սուրեն Պետրոսյան**